



www.anc.am info@anc.am

# ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ

Մայիսի 2-ին ազատ արձակվեց քաղաքացիական պայքարի ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանը: 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրություններում Բարեդամյանը ղեկավարել էր Լեւոն Տեր-Պետրոսյանի Հրազդանի նախընտրական շտաբը: Դատապարտվել էր իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնի գործողություն կատարելու եւ մարմնական վնասվածք հասցնելու կեղծ մեղադրանքով: Բանտից դուրս գալուց անմիջապես հետո նա հայտարարել է, որ այդ պահից՝ արդեն ազատության մեջ, «պայքարը շարունակելու է 24-ժամյա ռեժիմով»:

Հայ Ազգային Կոնգրեսի թռուցիկ

ԿԱՐԴԱ ԵՎ ՓՈԽԱՆՑԻՐ

մայիս 2011

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՂԹԱՆԱԿ

Հայ Ազգային Կոնգրես-համաժողովրդական շարժման եռամյա հետեւողական պայքարի համառոտությունը վերջապես «սայլը տեղից շարժեց»: Ապրիլի 8-ի հանրահավաքում իշխանությանը ներկայացվեց նվազագույն երեք պահանջ. պաշտոնական հավաստիացում տալ Մարտի 1-ի սպանությունների բացահայտման մասին, վերականգնել Ազատության հրապարակում իրազեկված հանրահավաքներ անցկացնելու իրավունքը, ազատ արձակել քաղաքացիական պայքարի ղեկավարներին: Այս երեք պահանջների կատարման դեպքում Կոնգրեսը պատրաստակամություն հայտնեց երկխոսության նստել իշխանության հետ՝ ներքաղաքական ճգնաժամի հաղթահարման խնդրի շուրջ՝ նախագուշացնելով, որ հակառակ դեպքում կփոխի իր մարտավարությունը եւ «ջրբաժան» կհայտարարի:

Իշխանությունը երեք տարվա մեջ առաջին անգամ տեղի տվեց. Ս. Սարգսյանը հանձնարարեց իրավապահ մարմիններին վերաքննել Մարտի 1-ի գործը, ապրիլի 28-ի հանրահավաքն Ազատության հրապարակում «արտոնվեց», հանրահավաքի նախօրյակին Ս. Սարգսյանը, ըստ էության, խոստացավ, որ քաղաքացիական պայքարի հարցը կլուծվի մինչեւ մայիսի 28-ը:

2008թ. մարտի 1-ից ի վեր հենց այս երեք հարցերն են եղել Շարժման ամենօրյա հիմնական քաղաքական խնդիրները: Վերջին երկու ամսվա հզոր հանրահավաքների շնորհիվ դրանք, փաստորեն, լուծվեցին միաժամանակ, եւ դա **ՀԱՄԱԺՈՂՎՈՐԴԱԿԱՆ ՇԱՐՇՄԱՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՂԹԱՆԱԿ** է: Այն իր քաղաքական տարողությամբ գերազանցում է երեք տարվա պայքարի տասնյակ՝ որքան էլ կարելու, բայց դրվագային բոլոր հաղթանակները միասին վերցրած եւ որակապես տարբերվում նրանցից:

Ո՞րն է դրա քաղաքական տարողությունը: Ա) Ամբողջ երեք տարի իշխանությունը պնդում էր, որ 2008-ի մարտի 1-ին տեղի են ունեցել զանգվածային անկարգություններ, ինչի դեմ իշխանությունը ձեռնարկել է համարժեք միջոցներ, եւ ամեն ինչում միակ մեղավորը ընդդիմությունն է: Ավարտելով դրա հետ կապված բոլոր դատավարություններն ու «ուսումնասիրությունները»՝ հայտարարվել էր, թե «Մարտի 1-ի էջը փակված է»: Այժմ նա, **ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ, ԱՏԻՊԿԱԾ Ե ՅՐԱՊՈՐՏԱԿԱԿ ԵՏ ԿԱՆԳՆԵԼ ՄԱՐՏԻ 1-Ի ՄԱՍԻՆ ԻՐ ԵՆԱՄՅԱ ՏԵՍԱԿԵՏԻՑ** եւ «վերաքննության» հրահանգ տալ, ինչը, բնականաբար, ենթադրում է փնտրել այլ մեղավորներ եւ առաջին հերթին՝ բացահայտել սպանությունները:

Բ) Ամբողջ երեք տարի Ազատության հրապարակը երեսակայելի եւ աներեսակայելի բոլոր առիթներով մերժվում էր տրամադրել հանրահավաքների համար: 2008-ի մարտի 1-ից հետո պաշտոնապես առաջին անգամ ընդունելով այնտեղ հանրահավաք անցկացնելու իրազեկումը՝ իշխանությունն, **ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ, ԽՈՍՏՈՎԱՆԵՑ, ՈՐ ԻՐ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉ ԱՅՎ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ Ե ԿԱՏԱՐՎԵԼ**:

Գ) Ամբողջ երեք տարի իշխանությունը պնդում էր, որ Հայաստանում քաղաքացիական պայքարի ղեկավարները չկան, կան քրեական հանցագործներ: Այժմ, երբ Ս. Սարգսյանը խոստանում է որոշակի կարծ ժամկետում (մինչեւ մայիսի 28-ը) ազատ արձակել Մարտի 1-ի դեպքերի շրջանակներում ազատագրվածներին, **ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ, ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ Ե, ՈՐ ՆՐԱՆՔ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅՑԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**:

Երեք դեպքում էլ դիտավորյալ օգտագործեցինք «ըստ էության» կապակցությունը. բնականաբար, իշխանությունն այս ամենն այլ կերպ, այլ բառերով է ներկայացնում, սակայն երեք դեպքում էլ կարելու քաղաքական էությունն է, ոչ թե ձեւը՝ բառերը: Որակապես տարբեր լինելով էլ՝ այդ հաղթանակը սկիզբ է դնում քաղաքական նոր իրավիճակի, պայքարի որակապես նոր փուլի, դուռ է բացում լուծելու հիմնական՝ **ԼԵԳԻՏԻՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՒԿՈՐՄԱՍԲ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳԵՄԱՆ, ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԿԱՆՃԱՄԻ ՀԱՂԹԱՅՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ**: Լուծելու՝ խաղաղ, քաղաքակիրթ, անկորուստ ճանապարհով:

## ՄԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է

# ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ

## ԺԱՍԸ 19-ԻՆ

### ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ԵՒ ԵՐԹ

# ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

1 օժձ 2 1/4 2 1 օժ 2 1/4



Հայ Ազգային Կոնգրեսի Մայիսի 31-ի հանրահավաքում նախատեսվում են քաղաքացիական պայքարի ղեկավարներ ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ եւ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ելույթները: Մայիսի 4-5-ին կալանավայրերում նրանց է այցելել ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը:

## ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՆԱՊԱՐՅԻՆ

### Ի՞նչ է նշանակում նոր քաղաքական իրավիճակ

Առանց ծանոթ լինելու աշխարհում բռնապետական ռեժիմների դեմ պայքարի պատմությանը, դժվար է գնահատել այն, ինչ տեղի է ունեցել եւ տեղի է ունենում Հայաստանում: Իսկ այդ պատմության ֆոնին դա եզակի մի երեւույթ է՝ պայքարի համաժողովրդական ընդգրկման մասշտաբով, բացառիկ համառությամբ, հաստատակամությամբ, դիմացկունությամբ, տեսականությամբ, իմտենիվությամբ, ինքնաբավությամբ, խաղաղ միջոցների ընտրությամբ, արդյունավետությամբ, հմուտ ղեկավարությամբ: Տրամաբանական հաղթական ավարտին հասցնելուց հետո այն, անտարակույս, որպես ուսանելի օրինակ, մտնելու է համաշխարհային քաղաքագիտական ու քաղաքական տեխնոլոգիաների դասագրքեր: Խնդիրը, բնականաբար, դասագրքեր մտնելը չէ: Խնդիրը՝ խաղաղ, առանց բռնության գործադրման, առանց ցնցումների, առանց արյան, առանց կոորդինատների ու պետական շահերը վնասելու բռնատիրական համակարգից երաշխավորված անցումն է բարձրակարգ ժողովրդավարության՝ մարդու ազատությունների, օրինակաւորության եւ արդարության ապահովման համակարգի:

Իսկ հաղթանակն այդ ավարտին հասնելու, ավելի ճիշտ՝ հասցնելու գործը, ինչպես մինչեւ հիմա, առավել եւս վերջնամատում, կախված է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացուց, ում համար անընդունելի է այս իրավիճակը, ով պատրաստ է իր իսկ ազատության, արժանապատիվ կյանքի համար թեկուզ նվազագույն ջանք ներդնել: Այս պայմանը բավարարվել է պայքարի առաջին՝ իշխանություն-Կոնգրես հակամարտու-

թյան փուլում, որը կարելի է պայմանականորեն կոչել բռնապետության դեմ **ՃԱԿԱՏԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՓՈՒԼ**: Այդ փուլում համաժողովրդական շարժումը հիմնադրվեց ընտրություն բռնեց՝ դրսեւորելով իր ֆիզիկական անկումության եւ քաղաքական պատրաստվածության որակները: Մայիսի 31-ից՝ նոր քաղաքական իրավիճակում, կսկսվի իշխանություն-Կոնգրես հարաբերության, կամ՝ **ՊԱՅՔԱՐԻ ԵՐԿՐՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԸ**: Դա ամենեւին չի նշանակում հանգիստ շրջան: Առավել եւս չի նշանակում «բարեկամական գրույց», ճիշտ այնպես, ինչպես այդպես չի կարող գնահատվել, օրինակ, Ադրբեյջանի հետ երկխոսությունը Ղարաբաղի հարցում: Ընդհակառակը՝ պետք է լինելու ուժերի ավելի մեծ համախմբում ու ցուցադրում եւ օգտագործում: Այն որակները, որոնք անհրաժեշտ են եղել պայքարի մասնակիցներին առաջին փուլում, նույն չափով անհրաժեշտ են լինելու նաեւ երկրորդում: Բայց այս դեպքում, անհրաժեշտաբար, **ԶԳԱՅԱԿԱՆ-ԿԱՄԱՅԻՆ** հիմքերի կողքին առաջին պլան պետք է գան Շարժման մասնակիցների **ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԿԱՄԱՅԻՆ** պատրաստվածության որակները: Անցած եռամյա պայքարի փորձը, Կոնգրեսի առաջնորդների ելույթները՝ որպես քաղաքական կրթության բաց համալսարան, տվել են այդ որակները Շարժման հիմնական միջուկին՝ տասնյակ հազարավոր մարդկանց: Նրանք պետք է օգնեն, որ նույն որակներն արագ փոխանցվեն պայքարին նոր միացած այլ տասնյակ հազարավորների: Նույն եռամյա պայքարի փորձն ու արդյունքները ապահովել են նաեւ այս դեպքում շատ կարելու մի այլ հանգամանք՝ լիակատար վստահությունը Կոնգրեսի քաղաքականության ու գործելակերպի նկատմամբ:

(Շարունակությունը տես էջ 4)

# ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԴՈՒՈՐ ԵՐԹ ՈՉ ԼՐԻՎ ԲԱՅ, ԱՊԱ ԱՌԵՎԱԶՆ ԿԻՍԱԲԱՅ Է

## Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը 2011թ. ապրիլի 28-ի հանրահավաքում



Միլիտերի հայրենակիցներ,

Այսօրվա ելույթս ես ուզում եմ սկսել Հայ Ազգային Կոնգրեսի ս.թ. ապրիլի 18-ին հրապարակված հայտարարության մեկնաբանությամբ: «Վերջին մի քանի օրերին, - ասվում է այդ հայտարարության մեջ, - վարչախմբի պատճառով միջազգային հանրության կողմից Հայաստանին հասցվել է երեք հարված»:

ա. Վերջնականապես դադարեցվել է «Հագարամյակի մարտահրավերներ» ծրագրով Հայաստանի ֆինանսավորումը: Այս ծրագրով Հայաստանը գտնվում էր այն փոքրաթիվ զարգացող երկրների շարքում, որոնք այդ օգնությունն ստանում էին որպես խրախուսանք ժողովրդավարության հաստատման ուղղությամբ բարեփոխումներ անելու համար: Ծրագիրը դադարեցվել է այն հիմնավորմամբ, որ մեզ մոտ, ինչպես ժողովրդավարության, այնպես էլ ընտրությունների վստահելիության ու մարդու իրավունքների ուղղությամբ, այդպես էլ որևէ առաջընթաց չի գրանցվում: Դրա հետևանքով կորսվեցին հարյուրավոր միլիոն դոլարներ, որից 70 միլիոնը, արդեն հաստատված, պետք է ներդրվեր 350 կմ գյուղական նշանակության ճանապարհների վերականգնման վրա:

բ. ԱՄՆ Պետդեպարտամենտը 2010թ. «Մարդու իրավունքների զեկույցում» ողջ միջազգային հանրության առջև Հայաստանը ներկայացնում է որպես մի բռնապետություն, որտեղ պարբերաբար և հետևողականորեն խախտվում են մարդու հանրահայտ իրավունքները: Այստեղ մասնավորապես շեշտվում են մարտի 1-ի սպանությունների չբացահայտման, քաղաքական բանտարկյալների առկայության, հավաքների ազատության սահմանափակման, սեփական իշխանություն ձևավորելու (ընտրելու)՝ մարդկանց իրավունքի զանգվածային խախտման, իշխանության ոչ լեգիտիմության հարցերը:

գ. ԵՆԽԿ Հայաստանի հարցով համազեկուցողները Մոնիտորինգի հանձնաժողովի քննարկումից հետո հանդես են եկել ընդարձակ հայտարարությամբ, որտեղ, որպես ներքաղաքական ձգձգմանի հիմնական պատճառներ, առանձնացրել են դարձյալ՝ մարտի 1-ի սպանությունների բացահայտված չլինելը, քաղաքատարկյալների առկայությունը, քննադատել են ՀՀԿ-ի գործունեությունը, որի պատճառով խախտվում է ազատ խոսքի և տեղեկատվություն ստանալու իրավունքը: Առաջին անգամ միջազգային փաստաթղթում արձանագրվում է, որ բարեփոխումների չկատարումը, գումարվելով սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը, կարող է հանգեցնել սոցիալական խռովության» («ՀԺ», 19.04.2011):

Եթե չլինել նշված փաստաթղթերի գրեթե միաժամանակյա հրապարակման հանգամանքը, ապա նրանք հազիվ թե այդքան ուշադրություն գրավեին, որովհետև գնահատականների առումով, առնվազն Հայաստանի հասարակության համար, նրանք, ըստ էության, որևէ նորություն չեն պարունակում, չհաշված անցյալի համեմատ ձևակերպումների որոշ խստացումը: Նորություն չեն պարունակում այն պարզ պատճառով, որ իշխանությունների ոչ-լեգիտիմության, ընտրությունների կեղծման, ժողովրդավարության սահմանափակումների, մարդու իրավունքների ոտնահարման, համատարած կոռուպցիայի մասին նմանօրինակ գնահատականներ, այն

էլ շատ ավելի փաստարկված ու շեշտված կերպով, բազմիցս տրվել են հենց Հայաստանի ներսում, և հենց այդ գնահատականներն են կազմում վերջին երեք տարիների համաժողովրդական պայքարի հիմքը: Գնահատելի է, անշուշտ, որ միջազգային հանրությունը վերջապես ասում է այն, ինչ երեք տարի շարունակ մենք էինք ասում, բայց նաև կարևոր է պարզել, թե որն է նրա որդեգրած այս դիրքորոշման նպատակը: Արդյոք, Հայաստանի իշխանությունների վրա ճնշում բանեցնելու միջոցով աշխարհաքաղաքական խնդիրների լուծման մտադրությունը, թե՛ մեր երկրի ժողովրդավարացման գործին նպաստելու անկեղծ ցանկությունը: Թերևս՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը, որոնց զուգորդումը, սակայն, տվյալ պարագայում պետք է համարել ոչ այնքան բացասական, որքան դրական երևույթ: Ինչ կարծիքով, առկա է նաև մի երրորդ դրոպապատճառ, այն է՝ արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների լույսի ներքո Արևմուտքի կողմից բռնապետական ռեժիմների նկատմամբ նախկինում ցուցաբերած անտարբերության կամ հանդուրժողականության մեղքի գիտակցումը և այդ անհեռատես քաղաքականության վերանայման մղումը:

\*\*\*

Այս ամենով հանդերձ, Հայաստանի իրականության վերաբերյալ միջազգային հանրության պաշտոնական արձագանքների պարունակած բավականին համարժեք գնահատականները ինձ ոչ թե ուրախության, առավել ևս չարախնդրության առիթ են տալիս, այլ ընդհակառակը, ինձ մեջ սոսկ դառնություն ու տխրություն են առաջացնում: Ինչո՞ւ երբեմնի ժողովրդավարության և օրինակելի տնտեսական բարեփոխումների կղզի համարվող երկիրը պիտի ընկներ այն օրը, որ աշխարհը նրա հետ խոսեր նման լեզվով, կամ իր ո՞ր մեղքի համար է Հայաստանի քաղաքացին հայտնվել այս նվաստացուցիչ վիճակում: Ինչպե՞ս կարելի էր թույլ տալ, որ արտաքին ուժերն այդքան բացահայտորեն խառնվեին մեր ներքին գործերին ու փորձեին օգտվել մեր թուլություններից, դրանք ծառայեցնելով իրենց սեփական նպատակներին: Մի՞թե վիրավորական չէ այն փաստը, որ Արևմուտքից ժամանած ցանկացած չինովնիկ իրեն իրավունք է վերապահում ժողովրդավարության դասեր տալ Հայաստանի իշխանություններին, ձեռքի հետ էլ սպառնալով, այդ դասերին չհետևելու պարագայում, համապատասխան պատժամիջոցներ կիրառել նրանց նկատմամբ:

Եթե մազոխիզմը բացառենք, ապա դժվա՞ր էր, արդյոք, խուսափել մեր ազգային արժանապատվությանն ու երկրի վարկին հասցված այս ծանր հարվածներից: Դժվա՞ր էր, արդյոք, սոսկ հետևել Սահմանադրությանը և ժողովրդավարության ու տնտեսության բնագավառներում դուրս չգալ օրենքի դաշտից: Հանուն ինչի՞, հետևաբար, մեր երկիրը պիտի ճեմարկվեր այսպիսի խայտառակ նվաստացումների, համուն ո՞ր վեհ գաղափարի կամ նպատակի: Որքան էլ ցավալի է՝ ընդամենը սրբություն չճանաչող մի բուռ մարդկանց իշխանատենչությունն ու ընչաքաղցությունը բավարարելու համար, և դա՞ ժողովրդի անխնա հարստահարման ու իսպառ թշվառացման գնով: Բոլոր ինքնագոհ ու ամբարտավան բռնազավթիչների նման, նրանք թվում է, թե իրենք հավերժ կարող են շարունակել իրենց հանցավոր գործունեությունը, թքած ունեցնելով թե՛ սահմանադրության ու օրենքների, թե՛ սովորական մարդկային արժեքների վրա: Սակայն ես վայրկյան անգամ չեմ կասկածում, որ հուսահատության դուռը հասցված ժողովուրդը վաղ թե ուշ ասելու է իր վճռական խոսքը, և գալու է այդ մարդկանց հատուցման ժամը, եթե, իհարկե, նրանք ժամանակին չսթափվեն ու արմատապես չփոխեն իրենց վարքագիծը: Ամբողջ խնդիրը համգում է նրան, որ դա տեղի ունենա երկրի անդառնալի մարդաբափման ու ամայացման փաստի առջև կանգնելուց առաջ՝ խնդիր, որը պետք է դառնա բոլոր պատասխանատու քաղաքական ուժերի, առաջին հերթին, իշխանության գլխավոր մտահոգության առարկան:

\*\*\*

Հայաստանն, այսպիսով, կանգնած է անհետաձգելի սոցիալական, տնտեսական, քաղաքական և ժողովրդավարական բարեփոխումների իրականացման անհրաժեշտության կամ, այլ կերպ ասած, իր ապագայի կերտման ճանապարհի առջև: Այդ բարեփոխումներից ամենահրատապները, պահանջները ձևով, արտացոլված են մարտի 1-ի հանրահավաքում հանընդհանուր քվեարկությամբ ընդունված մեր հայտարարության մեջ: Դրանցից առանձնացված երեք հայտնի պահանջները, ինչպես հստակորեն ներկայացրել ու բազմիցս կրկնել ենք,

վերաբերում են միայն մեր ընդարձակ ծրագրի իրականացման առաջին փուլին, և այդ առանձնացումն ամենևին չի նշանակում, որ Հայ Ազգային Կոնգրեսը իրաժարվել է մնացյալ տասներկու պահանջներից, ինչպիսի կասկած փորձում են սերմանել ոմանք: Այդպիսի միտք կարող էր ծնվել միայն իրողություններն ու փաստերն աղավաղելու սովոր մարդկանց ուղեղներում, որոնք, դժբախտաբար, քիչ չեն մեր երկրի քաղաքական շրջանակներում: Բայց իրողությունների ու փաստերի անպարկեշտ խեղաթյուրումը չի սահմանափակվում միայն այսքանով: Ոմանք նաև ջանք չեն խնայում նսեմացնելու ներկա փուլի համար առաջնահերթ դիտված երեք պահանջների արժեքը, պնդելով, որ առանց դրանց էլ, միևնույն է, Ազատության հրապարակի հարցը լուծված կարելի էր համարել, քաղաքատարկյալներն այս կամ այն կերպ ազատ պետք է արձակվեին, իսկ մարտի 1-ի սպանությունների բացահայտման վերաբերյալ պաշտոնական հավաստիացումն էլ ոչինչ չի նշանակում, որովհետև իշխանությունը սահմանափակվելու է մեկ-երկու երկրորդական անձանց պատժելով և այլն:

(Փակագծում տեղեկացնեմ, որ այս ամենի մասին ամենահստակն արտահայտվել է Հայաստանի, բառիս բուն իմաստով, «ակամ-ավոր» քաղաքական գործիչներից մեկը, մասնավորապես նշելով. «ՀԱԿ-ը միտումնավոր խելացի հաշվարկի արդյունքում իր բազմաթիվ պահանջների շեմն իջեցրեց մինչև երեք ամենահեշտ իրականացվող խնդիրներ՝ առավելագույնս թեթևացնելով իշխանության խնդիրը: Բայց, իհարկե, նա դա չէր անի, եթե չտեսներ, որ իշխանությունից արդեն դրանք իրականացնելու խթան, համաձայնություն կա» («Ժամանակ», 27.04.2011): Թվում է, թե գործ ունենք երկաթյա տրամաբանության հետ: Բայց իրականում այդ տրամաբանությունը կաղում է, այն էլ՝ երկու ոտքից: Նախ՝ միտումնավոր կարող են կոչվել միայն սխալ հաշվարկները, քանի որ խելացի հաշվարկներն ի բնե միտումնավոր՝ այսինքն մտածված, նպատակամետ պետք է լինեն: Եվ երկրորդ՝ օգտվելով մոդայիկ շախմատային եզրաբանությունից, եթե երեք պահանջ ներկայացնելով, մենք իշխանությանը շախ էինք հայտարարել, ապա վերջինիս համար ի՞նչ դժվար էր շախից դուրս գալ և, կատարելով մեր մտքով չանցնող մի չորրորդ պահանջ, մեզ մատ աներ. ասենք, ձեռքակալեր ու Հասագայի դատարան հանձնել Քոչարյանին: Վստահ եմ, ինձ ճիշտ հասկացաք. ես նկատի ունեմ Անդրանիկ Քոչարյանին):

Մի կողմ դրած կողմնակի խոսակցությունները, մենք գիտակցում ենք, անշուշտ, որ ներկայումս առաջադրված երեք պահանջներն արտաքուստ անմիջականորեն չեն առնչվում ժողովրդի մեծամասնության կենսական ակնկալիքներին, որոնք շատ ավելի ընդգրկում ու օրախնդիր են: Բայց դա միայն արտաքուստ, որովհետև անհնար է ժխտել այն իրողությունը, որ առանց նշված պահանջների կատարման, այդ ակնկալիքներն ընդհանրապես արդարանալու հեռանկար չունեն: Քանի դեռ Հայաստանի քաղաքական մթնոլորտը չի առողջացել, քանի դեռ իրական երկխոսություն չի սկսվել իշխանության և հասարակության միջև, սոցիալ-տնտեսական բարեփոխումների ձեռնարկման կամ ժողովրդի անհուսալի վիճակի բարելավման մասին խոսակցությունները լուրջ չի կարելի համարել: Իսկ քաղաքական մթնոլորտի առողջացման և երկխոսության ծավալման միակ միջոցը այդ երեք պահանջների շուտափույթ կատարումն է: Չհասկանալ այս ճշմարտությունը, նշանակում է՝ ընդհանրապես ոչինչ չհասկանալ քաղաքականությունից: Իսկ նսեմացնել այդ պահանջների արժեքը, նշանակում է՝ խափանել կամ առնվազն դժվարացնել քաղաքական մթնոլորտի առողջացման, հետևաբար նաև՝ բարեփոխումների իրականացման ու ժողովրդի վիճակի թեթևացման գործը:

Միջազգային հանրությունը չէ, որ լուծելու է մեր խնդիրները: Այդ խնդիրները մենք ենք լուծելու դրության թելադրած երկու ճանապարհներից մեկով՝ կա՛մ երկխոսությամբ ու ազգային համերաշխության կայացմամբ, կա՛մ էլ՝ ֆիզիկական առձակատմամբ, որի անկանխատեսելի հետևանքները արետաբեր կարող են լինել ժողովրդի ու երկրի համար: Մենք նախընտրում ենք առաջին ճանապարհը և վստահ ենք, որ հասարակության գերակշիռ մեծամասնությունը նույնպես միանշանակորեն կողմնակից է այդ ճանապարհի: Քաղաքական մարզիմալների և արկածախնդիրների ծայրահեղ տրամադրություններին ավելորդ են համարում անդրադառնալ, որովհետև նախ՝ դրանք ամենևին տիրապետող չեն, և երկրորդ՝ այդպիսի տրամադրությունները մեծ մասամբ խաբուսիկ են, քանի որ դրանց կրողները երբեք խոսքից գործի անցնելու ունակ չեն և, որպես կանոն, հակված են



ՔԱՂԱՔԱԿԱՆ

իրենց ցանկություններն իրականացած տեսնել ուրիշի ձեռքով: Ես սրանցից որոշակիապես առանձնացնում եմ բազմաթիվ ազնիվ երիտասարդների, որոնց հեղափոխական տրամադրությունները պայմանավորված են բացառապես քաղաքական ռոմանտիզմով: Մենք բոլորս էլ այդ տարիքում հիացած էինք Ֆիդել Կաստրոյով ու Չե Գեարայով::

\*\*\*

Իսկ այժմ՝ ավելի կոնկրետ: Եթե հիշում եք, մախորդ հանրահավաքում ես հայտարարեցի հետևյալը. «Մենք ակնկալում ենք, որ մինչև հաջորդ հանրահավաքը, որը կկայանա ապրիլի 28-ին, հանուն երկխոսության կայացման մեր կողմից առաջ քաշված երեք նվազագույն պահանջները... կատարված պետք է լինեն: Եթե դա տեղի չունենա, ապա Հայ Ազգային Կոնգրեսը, սպառնալով համարելով երկխոսության հնարավորությունը, հարկադրված է լինելու կտրուկ փոխել իր մարտավարությունն ու գործողությունների բնույթը: ...Ապրիլի 28-ը պետք է դառնա կա՛մ երկխոսության սկզբնավորման, կա՛մ էլ՝ իշխանության ու հասարակության վերջնական ջրբաժանի օր»:

Տեսնե՞ք, ուրե՞մն, թե կատարվե՞լ են, արդյո՞ք, այդ պահանջները, ու դրան համապատասխան, ձեզ հետ միասին որոշե՞նք մեր հետագա անելիքները:

ա. Կարծում եմ, հասկանալի է, որ սույն հանրահավաքի արտոնված լինելու համագանձը միանշանակորեն ցույց է տալիս, որ այլևս վերականգնված է Ազատության հրապարակում հավաքներ անցկացնելու՝ քաղաքացիների երեք տարուց ի վեր ոտնահարված իրավունքը, և իշխանությունը վերջնականապես հրաժարվել է այս հրապարակը քաղաքական միջոցառումների համար արգելված տարածքների շարքը դասելու մտադրությունից, ինչն, ի դեպ, հաստատվում է նաև Սերժ Սարգսյանի երեկվա հարցազրույցով:

բ. Մարտի 1-ի իրադարձությունների լիակատար բացահայտման անհրաժեշտության վերաբերյալ Սերժ Սարգսյանի հայտարարությունը, դատաիրավական բարեփոխումների հարցերի առթիվ ս.թ. ապրիլի 20-ին հրավիրված խորհրդակցության ժամանակ, նույնիսկ ավելին է, քան սոսկ պաշտոնական հավաստիացումը, և ավելի շուտ իրավապահ մարմիններից իջեցված ուղղակի ցուցում-հանձնարարական է նշանակում:

գ. Ինչ վերաբերում է երրորդ՝ քաղաքատարկյալների ազատ արձակման պահանջին, ապա ժամկետային կամ ֆորմալ առումով այն կատարված չէ: Թե ինչո՞ւ ժամկետային և ինչո՞ւ ֆորմալ՝ դրա բացատրությունը թաքցված է Սերժ Սարգսյանի երեկվա հարցազրույցի հետևյալ տողերում. «Ուզում եմ բոլորիդ հիշեցնել, որ այս տարի լրանում է մեր հանրապետության 20-ամյակը: Եվ ուզում եմ հիշեցնել, որ մենք մասն առնում ենք միջոցառումներ անցկացնում, և այդ միջոցառումները տևելու են ոչ թե մինչև սեպտեմբերի 21-ը, այլ մասն մինչև տարվա վերջ: Ուզում եմ նաև հիշեցնել, որ մենք բոլորս մտնում ենք մայիս ամիս, մեր ժողովրդի համար հաջողությունների ամիս, հաղթանակների ամիս: Մենք մայիսին տոնելու ենք մասն Հանրապետության օրը՝ տոն, որ շատ լուրջ դասերով է լի, և այդ դասերն այսօր էլ են արդիական: ...Այսօր մենք ունենք ուժեղ իշխանություն, այսօր մենք ունենք ընդդիմություն, որը թույլ չի տալիս իշխանություններին իրենց զգոնությունը թուլացնել, և համագործակցելով՝ մենք կարող ենք իրոք մեր երկրի համար ապահովել լուրջ հաջողություններ: Այստեղ ևս մենք պատրաստ ենք առաջինը լինելու, պատրաստ ենք լիցքաթափման քայլեր կատարելու, և ես արդեն իսկ հանձնարարել եմ Արդարադատության նախարարին՝ տալ առաջարկություններ»: Հանրապետության օրվա հիշատակումը, լիցքաթափման քայլերի մասին ասված խոսքերը և Արդարադատության նախարարին տրված հանձնարարականի վերաբերյալ տեղեկությունը կասկածի տեղ չեն թողնում, որ իշխանությունը, միանգամայն անթաքույց նկատառումներով, որոշել է քաղաքատարկյալների ազատ արձակման հարցը լուծել մայիսի 28-ի տոնի կապակցությամբ:

Գետնաբար, ըստ էության, մեր պահանջներից երկուսը կատարված են լիովին, իսկ մեկը՝ կիսով չափ, այն էլ ոչ թե բովանդակությամբ, այլ միայն ժամկետային առումով: Դա նշանակում է, որ երկխոսության հնարավորությունն առայժմ սպառնալից չէ կարելի համարել, ուստիև առայժմ հիմք չկա փոխելու մեր մարտավարությունն ու գործողությունների բնույթը: Պատկերավոր ասած՝ երկխոսության դուռը եթե ոչ լրիվ բաց, ապա առնվազն կիսաբաց է: Ես ոչ մի կասկած չունեմ, որ այն լրիվ բացվելու է մեկ ամսվա ընթացքում, ինչը մենք կարծանագրե՞նք մայիսի 31-ին կայանալիք մեր հաջորդ հանրահավաքում, երբ այս հարթակից ձեզ իրենց երախտագիտության խոսքը կասեն Նիկոլ Փաշինյանը և Սասուն Միքայելյանը: Երեք տարի համբերել ենք, մեկ ամիս էլ կհամբերե՞նք: Հայ Ազգային Կոնգրեսի անունից ես ներողություն եմ խնդրում Սասունից, Նիկոլից ու մնացյալ քաղաքատարկյալներից, որ նրանց ազատության խնդիրը չհաջողվեց լուծել մեր նախանշած ժամկետում: Սակայն, վստահ եմ, նրանք կհասկանան, որ մեկամսյա ուշացումն այն սկզբունքային հարցը չէ, որի համար արժե փչացնել Հայաստանի քաղաքական մթնոլորտի առողջացմանն ուղղված և արդեն իսկ հաջողություններ արձանագրած լրջագույն գործը: Բարի երթ:

# ՄՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՇՅԱՆԻ ՀԱՐՅԱԶԻՐՈՒՅՈՒՄ

Հայ ազգային կոնգրեսի եւ իշխանության միջեւ երկխոսությունն արդեն նկատելի է, Սերժ Սարգսյանը թե բանավոր հայտարարություններ, եւ թե գործնական քայլեր է անում ընդդիմության պահանջներին ընդառաջ: Ազատության հրապարակը բացվեց, քաղաքատարկյալներին այս ամսվա ընթացքում բաց կթողնեն: Իսկ դրանից հետո ընդդիմությունն ի՞նչ է անելու, ներկայացրած պահանջների մյուս կետերն է առաջ քաշելու եւ շարունակելու է երկխոսությունը, թե՛ ավելի կտրուկ քայլեր է ձեռնարկելու:

Ընդդիմության դիրքորոշման մեջ ըստ էության փոփոխություն չկա: Ի՞նչ էր ասում ընդդիմությունը տարիներ շարունակ՝ պահանջում էր ազատ արձակել քաղաքատարկյալներին, որից հետո հնարավորություն կլինի զնալ երկխոսության: Բայց երկխոսության գնալ ինչի՞ շուրջ, իհարկե, արտահերթ համապետական ընտրությունների շուրջ՝ թե նախագահական, թե խորհրդարանական: Ըստ էության՝ որեւէ փոփոխություն չի եղել: Գիտե՞ք, ՀԱԿ-ը կարող է իր գործունեության ընթացքում բազմաթիվ պահանջներ առաջ քաշել, տարբեր հարցադրումներ անել, կադրային փոփոխություններ պահանջել, սակայն ընդդիմության գլխավոր խնդիրը եղել է մնում է նույնը՝ մեր երկրում սահմանադրական կարգի հաստատումը: Ի վերջո, սրա համար է ստեղծվել Հայ ազգային կոնգրեսը: Այս խնդրի լուծմանը պետք է հետամուտ լինի ՀԱԿ-ը: Ես բազմիցս եմ ասել, որ լավագույն երկխոսությունը ազատ, արդար ընտրությունների անցկացումն է: Եվ որքան շուտ հասնենք դրան, այնքան մեր երկիրը կշահի: Իսկ եթե տեղի չի ունենում, դա ոչ թե ընդդիմության, այլ երկրի ծախսումն է: Այնպես որ, որեւէ բան չի փոխվել, Կոնգրեսի պահանջները մնում են նույնը:

Հնարավոր համարո՞ւմ եք, որ Հայաստանում օրինականության վերականգնումը տեղի ունենա ոչ թե արտահերթ ընտրությունների կամ իշխանափոխության միջոցով, այլ այս տարբերակով՝ ընդդիմությունը դրա կատարման հետ կապված 15 կամ ավելի պահանջներ ներկայացնի, իշխանությունն էլ աստիճանաբար կատարի: Ինչպես որ եղավ ՀԱԿ-ի առաջին 3 պահանջների դեպքում:

Ընդդիմությունը տարբեր պահանջներ ներկայացրել է, կարող է նոր պահանջներ էլ առաջ քաշել, սակայն նորից եմ ասում՝ ընդդիմության գլխավոր խնդիրը, եւ ես կասեի՝ այսօր մեր երկրի համար կարեւորագույն խնդիրը, օրինական իշխանության ձեւավորումն է: Իսկ դրան կարելի է հասնել միայն ազատ, արդար, ժողովրդավարական ընտրությունների անցկացման միջոցով: Պարզապես ամոթ է, 21-րդ դարում էլ մեր երկրում ընտրություններ են կեղծվում: Սրա վերջը պետք է տրվի: Սա է երկրի զարգացման նախապայմանը: Բազմիցս ասել եմ ու հիմա էլ ստիպված եմ կրկնել, որ կեղծված ընտրությունների հետեւանքները հնարավոր չէ չեզոքացնել այլ քայլերով: Դա կարելի է անել միայն նոր, ազնիվ ընտրությունների միջոցով: Կեղծված ընտրությունների արդյունքում ձեւավորված իշխանությունն ի վիճակի չէ երկրում օրինականություն հաստատել:

Կոնգրեսի առաջնորդներն անընդհատ ասում են, որ արտահերթ համապետական ընտրություններ են լինելու, բայց հերթական խորհրդարանական ընտրություններին ընդամենը մեկ տարի է մնացել: Իշխանական կողմից էլ անընդհատ պատասխանում են, թե ՀՀԿ օրակարգում ո՛չ նախագահական, ո՛չ խորհրդարանական արտահերթ ընտրությունների խնդիր չկա՝ ու չի՝ քննարկվել երբեք: Դուք, այնուամենայնիվ, վստահ եք, որ այս 1 տարվա ընթացքում Հայաստանում արտահերթ ընտրություններ կլինեն:

Մենք ամեն ինչ արել ենք ու անելու ենք, որպեսզի որքան հնարավոր է շուտ երկրում անցկացվեն արդար ընտրություններ: Դրանից շահելու է երկիրը, չեն շահելու միայն մի խումբ մարդիկ: Նաեւ մենք մշտապես արել ենք ամեն ինչ, որպեսզի մեր երկրում արմատական փոփոխություններ իրականացվեն առանց մեծ ցնցումների, առանց բախումների: Ընդդիմությունը հավատարիմ է մնալու իր որդեգրած սկզբունքներին եւ ձգտելու է հասնել արդյունքի: Եվ, բնականաբար, ամեն ինչ կախված է հասարակության ակտիվությունից:

ՀՀԿ-ն ներկայացնում է, թե Հայաստանի ավելի քան 900 համայնքներից մոտ 600-ի ղեկավարներն իրենց կուսակցության անդամներն են: Եվ նրանք ու վարչական այլ լծակները տարիներ շարունակ իրենց կուսակցության համար ապահովել են ձայների մեծամասնություն: Եվ կարող է այնպիսի վիճակ ստեղծվել, որ վարչախումբը կարողանա իր վերարտադրվելու համար անհրաժեշտ ձայների քանակը նորից ապահովել: ՀԱԿ-ը մտահոգված չէ, որ հաջորդ համապետական ընտրություններին էլ իշխող ՀՀԿ-ն վերընտրվելու համար լավագույնս



օգտագործելու է իր այս վարչական լծակները: Արդյո՞ք ժողովրդի մեջ առկա դժգոհությունը կարող է չեզոքացնել ընտրությունների կեղծման հնարավորությունը:

Ժողովրդի մեջ դժգոհությունը շատ մեծ է, այս իշխանությունը բացարձակապես ծախողված է, ծախողված է տնտեսության բոլոր բնագավառներում: Մարդիկ պարզապես փախչում են երկրից՝ հեռանկար չտեսնելով: Սա՝ մի կողմից, երկրորդը՝ եթե մենք խոսում ենք արդար ընտրությունների մասին, ապա դա ենթադրում է ընտրությունների անցկացում առանց վարչական լծակների, սահաբեկումների եւ այլ ընտրակեղծիքների: Սակայն նույնիսկ այդ վարչական լծակները չեն փրկել իշխանություններին պարտություններից թե 1998, թե 2003 եւ թե 2008 թվականների ընտրություններին: Պարզապես այդ ընտրությունների արդյունքներն ամենակոպիտ ձեւով նենգափոխվեցին: Այնպես որ, արդար ընտրությունների դեպքում ընդդիմության հաղթանակը որեւէ կասկած չի առաջացնում:

Ձեր կարծիքով, այնուամենայնիվ, ինչո՞ւ իշխանությունները գնացին ՀԱԿ-ի պահանջներին ընդառաջ եւ կատարեցին որոշ քայլեր:

Դա տեղի ունեցավ հասարակության, ինչպես նաեւ՝ միջազգային կառույցների հետեւողական ճնշման արդյունքում: Վաղուց էր պետք դա անել:

ՀԱԿ-ում մտահոգություն չկա, որ իր նկատմամբ առաջացող դժգոհության արդյունքում իշխանությունները կարող են մի երրորդ ուժ ձեւավորել, որը տեր կկանգնի այդ դժգոհող զանգվածներին ու ընդդիմադիր դաշտում դառնա Կոնգրեսի մրցակից: Չի բացառվում, որ այդ ուժը ձեւավորվի նաեւ առանց իշխանությունների միջամտության:

Նման փորձեր եղել են ու էլի կլինեն: Ակնհայտ է, որ եթե մարդիկ տեսնեն, որ ՀԱԿ-ը հետեւողական չէ իր պայքարում, ապա կգնան այլ ուժերի հետեւից: Եթե, իհարկե, այդպիսի ուժեր ձեւավորվեն: Մենք տեսնում ենք, թե ինչպես են ոմանք փորձում ինքնահաստատվել՝ Կոնգրեսին վարկաբեկելու միջոցով, սակայն համոզված եմ, որ մեր ժողովուրդն ի վիճակի է ճիշտ կողմնորոշվել եւ տեսնել, թե ով է իրապես պայքարում այս ռեժիմի դեմ, եւ ով է ունակ լուծել երկրի առաջ կանգնած խնդիրները:

ՀԱԿ-ն իր սուր քննադատությունն ինչո՞ւ է ավելի շատ ուղղում նախկին նախագահ Ռեբերտ Քոչարյանի, եւ ոչ թե Սերժ Սարգսյանի դեմ: Եվ Ռ.Քոչարյանին ուղղված քննադատությունները պատճառ են դառնում հայտարարությունների, թե ՀԱԿ-ն ու գործող իշխանությունները խնդիր ունեն, որ Ռ.Քոչարյանը չվերադառնա քաղաքականություն:

- Նման խոսակցությունները որեւէ հիմք չունեն: Գործող վարչախումբը նախորդի օրգանական շարունակությունն է, եւ երկուսն էլ պատասխանատու են երկրում ստեղծված այս վիճակի համար: Երկուսն էլ հանդիսացել են երկրում ձեւավորված կրիմինալ, քրեաօլիգարխիկ համակարգի երաշխավորը: Իսկ ընդդիմության խնդիրն է երկիրն այս համակարգից ազատելը:

Հավատո՞ւմ եք Մարտի 1-ը բացահայտելուն ուղղված Ս.Սարգսյանի հայտարարությանը:

Այն, ինչ ասվեց Ս.Սարգսյանի կողմից, առայժմ խոսքեր են, ժամանակը ցույց կտա:



**ՕՐԱԿԸ ՄԵՂՄՎՈՒՄ Է**

Հանրահավաքների հզորության աճի համեմատ երբևէ չէր հասնում և սեղմվում է միջազգային ճնշումների օղակը:

1. Մայիսի 9-ին հրապարակվեց Երուսաղեմի Խորհրդի Մարդու իրավունքների գլխավոր հանձնակատար Թոմաս Համարբերգի զեկույցը՝ Հայաստանում մարդու իրավունքների մասին: Դրանից մի քանի շաբաթ առաջ միջազգային երեք փաստաթղթերում արդեն իսկ Հայաստանի իշխանությունը ենթարկվել էր ամենախիստ քննադատության: Մաչորրորդ փաստաթուղթն է՝ շատ ավելի կոշտ գնահատականներով ու պահանջներով: Ինչպես նախորդները, այնպես էլ սա նույնությամբ կրկնում է Հայ Ազգային Կոնգրեսի կողմից արդեն երեք տարի շարունակ տրվող գնահատականներն ու ներկայացրած պահանջները: Այլ խնդիրների թվում Համարբերգն իր զեկույցում ընդարձակ անդրադառնում է քաղաքատարկյալների խնդրին՝ ընդգծելով հատկապես Նիկոլ Փաշինյանի եւ Սասուն

Միքայելյանի հարցերը, անգամ բանտերում նրանց նկատմամբ կիրառված ապօրինությունները: Նա պահանջում է ըստ էության քննել Մարտի 1-ի իրադարձություններին վերաբերող գործերը, բացահայտել սպանությունների հեղինակներին, հրաման տվող պատասխանատուներին, ինչպես նաև նյութական փոխհատուցում տրամադրել զոհերի ընտանիքներին:

2. Մայիսի 12-ին հրապարակվել է Երուսաղեմի Միության հայտարարությունը, որն արդեն ճշգրիտ վերարտադրում ու պաշտպանում է Հայ Ազգային Կոնգրեսի վերջին երեք պահանջները եւ ակնկալում դրանց արագ, ամբողջական ու անխաթար կատարումը: Հիշեցնենք, որ դրանից մի քանի օր առաջ տեղի էր ունեցել Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը Ընդլայնման եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի հետ:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

25.04.2011. Լեւոն Չուրաբյանի հանդիպումը Շվեդիայի խորհրդարանի պատգամավորներ Անելի Էնոքսոնի և Ֆրեդրիկ Մալմի հետ:

29.04.2011. Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը Ընդլայնման եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի հետ:

29.04.2011. Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական եւ եվրասիական հարցերով փոխտեղակալ Թինա Քալդանաուի հետ:

11.05.2011. Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը Գերմանիայի ԱԳՆ Արևելյան Եվրոպայի, կովկասյան տարածաշրջանի և Կենտրոնական Ասիայի հարցերով հատուկ ներկայացուցիչ, դեսպան Պատրիցիա Ֆլորի հետ:

11.05.2011. Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Պետրոս Էֆթիմիուի հետ:

Հայ Ազգային Կոնգրեսի կենտրոնական գրասենյակից այս հանդիպումներին մասնակցել են նաև Ավետիս Ավագյանը, Լեւոն Չուրաբյանը, Դավիթ Շահնազարյանը, Վլադիմիր Կարապետյանը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել է հարցերի ամենալայն շրջանակ. Լեւոնյանի Գարաբաղի հակամարտություն, Հայաստանի ներքաղաքական իրավիճակ եւ ներքաղաքական զարգացումներ, քաղաքատարկյալների խնդիր, ներքաղաքական ճգնաժամի հաղթահարման ուղիներ, կոռուպցիայի խնդիր, մանր եւ միջին բիզնեսի խնդիր, գյուղացիության վիճակը, հայ-թուրքական հարաբերություններ, արտագաղթի խնդիր, երուսաղեմյան կառույցներ-Հայաստան հարաբերություններ եւ այլն: Որպես ներքաղաքական ճգնաժամի հաղթահարման ճանապարհ՝ քննարկվել է մասնավորապես արտահերթ ընտրություններ անցկացնելու միջոցով լեգիտիմ իշխանության ձեւավորման հարցը:

(Սկզբը տես էջ 1)

**Ինչո՞ւ իշխանությունը հանկարծ որոշեց կատարել Կոնգրեսի պահանջները**

Ոչ մի բռնապետություն հանկարծ չի խելոքանում կամ խոհեմ չի դառնում, ոչ էլ ինչ-որ պահից սկսում է մտածել ժողովրդի մասին: Դրան ոչ մեկը, բնականաբար, չի հավատում: Մյուս կողմից՝ ամեն մի բռնապետություն ունի գոյատևման իր ռեսուրսները, որոնք նա մինչև վերջ ծախսում է իր իշխանությունը պահելու համար: Բայց գալիս է մի պահ, երբ այդ ռեսուրսները սպառվում են: Հակառակ դեպքում հին աշխարհի բռնապետություններն առ այսօր գոյություն կունենային: Հայաստանում ավագակապետական իշխանության հիմնական ռեսուրսը այն բարեհաճ վերաբերմունքն էր, որ միջազգային հանրությունը, ավելի ճիշտ՝ գերտերությունները ցուցաբերում էին նրա նկատմամբ՝ գուլքից սկսած մինչև երկրի ազգային շահերի վաճառքի դիմաց: Բայց ինչպես ամեն ինչ, այնպես էլ այդ շահախնդիր բարեհաճությունը կարող է աշխատել որոշակի չափ ու սահմանի մեջ: Նույն այդ միջազգային հանրությունը չկարողացավ շարունակել իր բարեհաճ վերաբերմունքը արաբական աշխարհի այն բռնապետների նկատմամբ, որոնց դեմ համաժողովրդական բողոքի ալիք բարձրացավ: Ծիշտ նույն կերպ՝ Հայ Ազգային Կոնգրեսի եռամյա պայքարի հետեւանքով նա ստիպված փոխում է իր դիրքորոշումը Հայաստանում իշխող ռեժիմի նկատմամբ: Սրա հետ միաժամանակ, սոցիալական վիճակի ահավոր վատթարացման եւ իշխանության մի քանի անխոհեմ քայլերի հետեւանքով երկրում ավելի սրվեց սոցիալական վիճակը: Տասնյակ հազարավոր մարդիկ դուրս եկան փողոց եւ միացան ընդհանուր պայքարին: Այնպես որ՝ ոչ մի գաղտնիք չկա. այն բանից հետո, երբ **ԿՈՆԳՐԵՍԻ ՎԵՐՋԻՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՆՐԱՋԱՎԱՔՆԵՐԻ ԹԻՎԸ ԶԱՆՍՊԱՏԱԿՎԵՑ, ԻՆՉՆ ԱՎԵԼԱՑՐԵՑ ՆԱԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՇՈՒՄՆԵՐԸ**, իշխանության եռամյա համառությունը ստիպված եղավ տեղի տալ՝ գոյազանալով իր համար ավելի վատ զարգացումներից:

**Ո՞րն է Կոնգրեսի նպատակը եւ մարտավարությունը**

Հասնել իր վերջնական քաղաքական նպատակին՝ բռնազավթած իշխանությունը վերադարձնել ժողովրդին, վերականգնել սահմանադրական կարգը, ունենալ լեգիտիմ իշխանություն: Այս նպատակն արձանագրված է Կոնգրեսի Հռչակագրում, որի տակ 2008թ. օգոստոսի 1-ին ստորագրել են 18 քաղաքական ուժեր, եւ որին միացել են տասնյակ հազարավոր անհատ քաղաքացիներ: Նույն Հռչակագրում արձանագրված է նաև, որ դրան պետք է հասնել խաղաղ ճանապարհով՝ երկխոսության միջոցով: Քաղաքական ճգնաժամը երկխոսությամբ հարթելու մասին Լեւոն Տեր-Պետրոսյանն առաջին անգամ խոսել է դեռ 2008թ. մարտի 5-ին, Սահմանադրական դատարանի նիստում՝ իր համաձայնությունը տալով Երուսաղեմի Միության նախագահության առաջարկներին, որոնցում, որպես երկխոսության պայման, նույնպես նշվում էր բոլոր ձեռքարկվածների ազատ արձակումը եւ մարտի 1-ի իրադարձությունների բացահայտումը: Հետագայում նա այդ բանը կրկնել է բազմիցս: Այս ընթացքում շատերն են հարցրել՝ ինչպե՞ս կարելի է երկխոսել ավագակապետության հետ. անհնար է, որ նրանք սեղանի շուրջ

նստեն արտահերթ ընտրության, փաստորեն՝ իշխանությունը հանձնելու հարցի օրակարգով: Դժվար է, բայց անհնար թվացող այդ խնդրի առաջին քայլը, ի տես բոլորի, արդեն արված է: Իսկ որ անհնարին ոչինչ չկա համաժողովրդական կամքի դրսևորման առջև՝ մարդկության փորձի վրա հիմնված հին ճշմարտություն է՝ բանաձեւված **«ԳԵՂ ԿԱՆԳՆԻՒ ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ»** հայտնի ժողովրդական ասույթով: Եթե մարտի 17-ին, ապրիլի 8-ին, ապրիլի 28-ին, երբ «գեղը կանգնեց» 100 հազարով՝ գերանը (իշխանության համառությունը) ճաք տվեց, ապա այդ համառությունն անպայման կտրվելու է, երբ կկանգնի 200 հազարը: Այնպես որ՝ այստեղ էլ ոչ մի գաղտնիք չկա. ոչ վարչախմբի, ոչ էլ Կոնգրեսի կողմից իրենց սկզբունքներին «դավաճանելու» խնդիր չկա: Երկու կողմից կա պարզ հաշվարկ. Կոնգրեսը հաջողությունների է հասնում, որովհետեւ մեծացել են իր ռեսուրսները եւ մեծանալու միտում ունեն, իշխանությունը նահանջում է, որովհետեւ նվազել են իր ռեսուրսները եւ այդ միտումը շարունակվելու է: Հենց այս խզման մեծացումն էլ բերելու է լուծման, երբ նույն պարզ հաշվարկով հասարակությանը դիմադրելն ավելի վատ վերջաբան կենթադրի իշխանության համար, քան նրա պահանջը կատարելը:

**Կարո՞ղ է իշխանությունը «ժամանակ շահելով», իր ռեսուրսները համալրելու աղբյուր գտնել**

Ամբողջ երեք տարի հենց այդ հույսով էլ առաջնորդվել է իշխանությունը: Բայց այդ երեք տարում նա ընդամենը մինչև վերջ ծախսել է ունեցած ռեսուրսները եւ կանգնել քաղաքական սնանկացման առջև: Եթե նա նման հնարավորություն տեսներ, այս անգամ էլ Կոնգրեսի ոչ մի պահանջի ընդառաջ չէր գնա:

Սակայն տվյալ հարցի մեջ դրված մտահոգությունը արդարացված է մեկ այլ առումով: Իշխանության նահանջը չի կարելի շփոթել նրա վերջնական կապիտուլյացիայի հետ: Պատկերավոր ասած՝ կշեռքի մժարները, որ հավասարվել ու թեքվում են հօգուտ Կոնգրեսի, ետ շրջելու երկու տարբերակ կա: Սեփական մժարը ծանրացնել նա չի կարող (չի կարող ետ շրջել միջազգային հանրության գնահատականները, չի կարող զսպել գնաճը, չի կարող բարելավել սոցիալական վիճակը, վերացնել կոռուպցիան եւ այլն): Բայց նա նույն արդյունքը կստանա, եթե կարողանա հասնել Կոնգրեսի մժարը թեթևացնելուն: Ծիշտ է, այդ բանը նա միշտ արել է՝ հանրահավաքների մասնակիցների թիվը նվազեցնելու նպատակով իր հայտնի գործողություններից սկսած, մինչև «պառավական գրույցներին» մակարդակի հերյուրանքներ տարածելը, Կոնգրեսը պառակտելու փորձերից սկսած, մինչև «երրորդ ուժ» ձեւավորելու ձախողված ծրագրերը: Բայց դա նրա համար միշտ եղել է ոչ հիմնական, օժանդակ միջոց: Այս նոր փուլում, այլ ելք չունենալով, **«ԵՐՐՈՐԴ ՈՒԺԻ» ՕԳՏԱՌԾՄԱՆ ԱՅԴ ՄԻՋՈՑԸ ՆՐԱ ՀԱՄԱՐ ԳԱՌՆԱԼՈՒ Է ՀԻՄՆԱԿԱՆԸ, ՄԻՍԿԸ**: Բայց «երրորդ ուժի» բոլոր ծրագրերն ու թեկնածուներն էլ այս ընթացքում հերթով փուչիկի նման պայթել են: Առաջիկայում նրանք Կոնգրեսի դեմ կենաց-մահու քարոզչական պայքար կնդեն, սակայն էժանագին հերյուրանքներ տարածելուց բացի այլևս այլ բանի ունակ չեն: Մինչդեռ Կոնգրեսի իրական հաջողությունների ֆոնին դրանց քչերն են հավատալու:

**Ինչքա՞ն կարող է տեսել պայքարի այս երկրորդ փուլը**

Խաղաղ ճանապարհով, առանց երկրի շահերը վտանգելու, լեգիտիմ իշխանության ձեւավորմամբ սահմանադրական կարգի վերականգնման խնդրի լուծման եզակի այս հնարավորությունը շատ թանկ արժե: Դրա մեջ առարկայացած են Մարտի 1-ի զոհերի արյունը, հարյուրավոր վիրավորների առողջությունը, շուրջ 150 քաղաքատարկյալների, հալածյալների ու նրանց ընտանիքների տառապանքը, հետապնդումների ենթարկված հազարավոր մարդկանց տվյալանքները, տասնյակ հազարավոր մարդկանց ջանքերը, հարյուր հազարավորների երազանքը: Այս արժեքին պետք է վերաբերվել բացառիկ պատասխանատվությամբ: **ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՐԹԱՆԱԿԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԿԱՏԱՐԱԾ ՅԱՆԿԱՅԱԾ ԶԱՅԼ ՊԵՏՔ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ 100%-ԱՆՈՑ ԱՐԳՅՈՒՆԸ**: Միայն այս կերպ Հայաստանում կարող է հաստատվել ամենաբարձր լեգիտիմությամբ մի իշխանություն, որը կկարողանա լուծել բարդացած արտաքին քաղաքական խնդիրները՝ սկսած Գարաբաղի հարցից, լիակատար ու անցնցում կազմաքանդել ավագակապետական համակարգը, առավելագույնս իրականացնել հսկայական այն սպասումները, որ ձեւավորվել են հասարակության մեջ: Այլ կերպ վարվել, որքան էլ դա ձեւակերպի հերոսական խոսքերով, անգամ անկեղծ մտահոգությամբ, անթույլատրելի է, եթե չասենք՝ հանցագործություն: Շտապում ենք բողոք՝ շատ լավ հասկանալով յուրաքանչյուր օրվա կորցրածի արժեքը: Բայց, Աստված մի արասցե՝ հույզերի տրվելով՝ կորցնենք աղետի դեմն առնելու միակ այս հնարավորությունը եւ հավերժացնենք ազգասպան այս ռեժիմը:

Ըստ այդմ՝ առաջիկայում սկսվելու է պայքարի ամենապատասխանատու, ամենավճռական, բայց նաև ամենամուրթ փուլը: Քաղաքական պայքարում յուրաքանչյուր կողմ աշխատում է հակառակորդին թողնել քայլի մեկ տարբերակ (այդպես մեկ տարբերակ էր մնացել Ս. Սարգսյանին Կոնգրեսի երեք պահանջները ստանալիս): Եթե քաղաքական ուժն իր համար է թողնում քայլի մեկ տարբերակ, նշանակում է՝ ինքն է գնում պարտվելու ճանապարհով: Կոնգրեսը միշտ ունեցել է մշակված մի քանի տարբերակ, ու հիմա էլ հաջողության երաշխիքը շարունակության մի քանի տարբերակ ունենալն է: Տարբերակների ընտրությունը կատարվում է ունեցած ռեսուրսներից ելնելով: Հակառակորդին վերջին մեկ տարբերակ թողնելու քայլը նույնպես պայմանավորված է դրանով: **ԿՈՆԳՐԵՍԻ ՌԵՍՈՒՐՍԸ ԵՂԵԼ ԵՒ ՄՆՈՒՄ Է ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ՈՒԺԻ ՅՈՒՑԱԳՐՄԱՆ ՉԵՒԸ՝ ՀԱՆՐԱՋԱՎԱՔՆԵՐԻ ԲԱԶՄԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԵՒ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ**: Հենց դա էլ որոշիչ դեր է խաղալու տարբերակների ընտրության գործում, այդ թվում՝ նաև ժամկետային առումով: Սա է այսօրվա քաղաքական իրականությունը:

Տպագրվել է «Տիրան Գեորգյան» Ա/Չ տպարանում  
Տպաքանակը՝ 10 000 օրինակ